4 Սապէս Հրեայքն անդրանկա ցեալ.
Փրկչին շնորհացն բայց ոչ հա սեալ.

2 Սա ընդ Յակոբ օրհնա կեալ.
որ ըզգեստիւք եղբօրն օրհ նեալ.



3 Եսաւ երէցն խոտան գը տեալ.
զի զօրհնութիւն հօրն չընկա լեալ.

1 Եսաւ պատկեր Հրէից ե ղեալ.
ուստի Փրկիչն մեր է ցե ղեալ.

5 Փրկիչն ընդ Մօր օրհնաբա նեալ.
Ի Յակոբայ շառաւի ղեալ.

# ՀԱՄՕՐԷՆ, ԵՒ
## ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ՚ԱՌԱՆՁԻՆ ԱՐԱ-
## ՄԵԱՆ ՏՈՀՄԻՆ ԱՐԻՑՍ
### ԵՐԱՆԵԱԼ ՀՈՎՈՒԱՊԵՏԱՑ, ԵՌԱՓԱՅԼԵ-

պիսկոպոսաց, Շնորհազարդ Վարդապետաց, երկնա-
հրաւէր Քահանայից, Ազնուամիտ Իշխանաց, պերճապատիւ Դով-
լաթաւորաց, բարեպաշտ Վաճառականաց, խելամուտ Արհեստա-
ւորաց, և առհասարակ ամ՟ ՚ի Ք՟ս հաւատացեալ Լուսաւորչական
հօտին, և հօտապետացն. մեծամեծաց՝ և փոքունց, ՚ի Մայրաքա-
ղաքս՝ և ՚ի Գիւղաքաղաքս, կամ յայլուրեք բնակելոցն. Ամենե-
ցուն միահաղոյն, որք զայս յօրդորական Թուղթս
ընթեռնուն, կամ զորին ընթեռնուլն լսեն.
Ողջոյն, և Սէր Ք՟սաւանդ, Խաղա-
ղութիւն յԱ՟յ Հօրէ մերմէ.
ըստ իւրաքանչիւրոյ հասակի, աստիճանի, և դասու:

## ԱՆԵՐԿԲԱՅ ԻՄՆ Է՛ ՅԱ-
## ՄԵՆԱՅՆՈՒՐԵՔ ԳՈՅ ՏԷՐՈՒ-
### ԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆՆ. ՈՒՐԵՄՆ ԵՒ

յամ՟ տեղիս արժան իսկ է կալ յաղօթս առ Տէր հոգւով
և ճշմարտութեամբ. զոր ձեռս ՚ի վեր բառնալով առանց երկմտու-
թե: 1 Տիմ. 2. 8: Բայց՝ ոչ ՚ի հնումն անտեղի իմն էր՝ զոհս
մատուցանել արտաքոյ Տաճարին Երուսաղէմի. նոյնպէս և ՚ի Նոր
ումս անարժան իմն է արտաքոյ Սբ Եկեղեցւոյն մատուցանել զԱմե-
նասուրբ Պատարագն. որ է Ընդհանրական, Քաւչարար՝ հաշ-

տու

տարար, և Խաղաղարար պաշտօն առ Աստուած։

Գուրէ Սբն Կիւրեղ Աղեկսանդրացին. ՊԱտարագն՝ զոր խորհր դաբար հռչակեմք՝ պարտ է զի մատուսցի միայն 'ի սբ Եկեղեցիս Ուղղափառաց, և ոչ ամենևին յայլուրեք. որք այլազս առնեն՝ յայտնապէս խախտեն զօրէնս։ ՍՈՐԵՄՆ՝ հարկէ սակս որ Պատարագին ունիլ զատանձին, և զհանդիսական տեղի. ուր Հաւատացեալքն անդամանդամ 'ի մի վայր ժողովեալ՝ միաբան հանդերձ 'Քահանայիւ կատարիցեն զփրկարար խորհուրդ որ Պատարագին առ 'ի քաւութիւն մեղաց համօրէն Հաւատացելոյն։ Աստ որում բարեպաշտօնէր, հարազատամիտ և բազում գովութեան արժանի ազգս մեր Հայոց յամ տեղիս՝ ուր բնակին կամ յաճախեն, ունին միշտ ինքեանց առանձին պայծառատեսիլ եկեղեցիս 'ի պատիւ Սբ Պատարագին. նոյնպէս և աստ յ'այսմ Ամստրդամ քաղաքի յառաջ քն զտասն վեց ամ մերազնեայքս ինքնայօժար կամօք կամեցան շինել ինքեանց հաստահիմն եկեղեցի. բայց յ'այլևայլ պատճառէ, և պատահմանէ մինչև ցայսօր յառաջեցեալ գործն յետացաւ։

ԱՍՏԱՆՕՐ մեք աստ 'ի մեծազօր, և համբաւահռչակ Ամստրդամ քաղաքի եղեալ Հայքս՝ ըստ բարեհաճութեան Հոգւոյն Սրբոյ, որով եմք՝ կեամք և շարժիմք յաճախեալ՝ և բազմացեալ՝ համախոհ հաւանութբ բարւոք վարկաք կանգնել՝ և արձանացուցանել յ'այսմ ծովապարփակ, և հարստավաճառ քաղաքումս զառանձին, և հաստահիմն Եկեղեցի 'ի փառս Ամենասբ Երրորդութեան, 'ի պարծանս Լուսաւորչի Սբ Աթոռոյն, և 'ի հոգևշահ պայծառութիւն Լուսաւորչադաւան Հօտին 'ի մէջ այսքան չքնաղանուն ազգացս, որք են աստ յ'այսմ քաղաքի. և 'ի մէջ ծայրածաալ վաճառատեղեաց, ընդ որս ունիմք յամուրեք երթևեկութիւնս։

Այսու դիտաւորութեամբ աստ եղեալ Արամազնեայ սակաւաթիւ վաճառականքս ինքնայօժար կամօք 'ի մէջ եղաք աւելի քան զեօթն հազար գուլդիս, և հրամանաւ մեծազօր իշխանացն քաղաքիս ընկլզեն արարեալ՝ ձեռնարկաք շինել զվաղեմեայ փափագեալ Եկեղեցին՝ զարդարուն իբրև զՀարսն Լուսոյ։

ԱՐԴ՝ ազնուապատիւ՝ և բարգաւաճեալ Տեարք՝ սիրելի և համազնեայ եղբարք, որք ընդ մեզ ընկալեալ էք զծնութիւն Հոգւոյն Սբոյ՝ ո՛վ ազգայինք մեր՝ և համակարիք, արդիւնաւոր ձեռնտուութբ, և զօրաւոր հաղորդութբ լերուք ընդ մեզ հաղորդ՝ և կցորդ այսմ Ածավայելուչ Եկեղեցաշինութեն գործոյս. որով և դուք ար

դիւնօ

դիւնորէն հաղորդ՝ և կցորդ լինիցիք հոգևոր բարեացն, որք աստ կատարին։ Քանզի ասէ փրկիչն հանուրց. Տուք, և տացի ձեզ. չափ բարւոք՝ թաթաղուն՝ շարժուն՝ և զեղուն տացին 'ի գոգս ձեր. նովին չափով՝ որով չափէք՝ չափեսցի ձեզ։ Ղուկաս 6.38։ Եւ որ-պէս 'ի գործ խորանին Վկայութեան իւրաքանչիւրոք բերէր հաս՝ և պտուղ ըստ կարի՝ և յօժարութեամբ սրտի. իւրոյ. Հարուստքն զակունս պատուականս՝ ոսկի՝ և արծաթ. Այլքն պղինձ՝ փայտ՝ թել՝ մորթի՝ մազ՝ իւղ՝ և խունկ։ Ելից 35.23։ Սոյնպէս և հարազատամիտ բարե-պաշտութիւն ձեր ըստ կարի՝ և յօժարութեամբ սրտի ձերոյ ընդ մեզ ձեռնտու-լերուք՝ զի հաստատեսցի աստ Եկեղեցի մի՝ իբրև Հարսն Քրիստոսի 'ի հան-դերձս ոսկեհուռս զարդարեալ՝ և պաճուճեալ. 'ի մխիթարութիւն

աստ գտեալ մերազնեայ ժողովրդեանս։

ԱՐԴ՝ ովք յօժարակամ սրտիւ ընդ այս դիտաւորութիւն բոլորապա-տուղ նուէր ինչ կամիցի մատուցանել առ 'ի գտանել զպատուական մար-գարիտն. և զԱստուած անձին իւրում բարեկամ առնել՝ գրեսցէ զանուն իւր, և զքանիս տրոցն, և առաքեսցէ այսր յԱմստերդամ 'ի ձեռս Սուլթանումի որդի Բաբաջանին, և Թէոդորոսի որդի Նիկողոսին. որք զանուանս, և զնուէրս Պտղաբերացն գրեսցեն 'ի Կոնտակի յան-մահ յիշատակ պտղաբերացն։

ՔԱՆԶԻ աստ եղեալ Հայկազնեայ ժողովրդեան հաւասար հա-մանութեամբ, և միաբան հաճութեամբ վերոգրեալ Բաբաջանն՝ և Նիկողոսն կարգեալ հաստատեցան Հոգաբարձուք՝ Վերակացուք՝ և Գործակալք այս Եկեղեցաշինութեանս. որք և զայս յորդոր-կան՝ և հրաւիրական թուղթս հաւանութեամբ աստ եղեալ մերազնեայ անուանի վաճառականացն Ձեր Բարեպաշտութեանդ յանդիման կացուցանեն. Ողջ լերուք։

յԱմստերդամ. յԱմի Տեառն 1714։
Թուին մեր 1163. Յունվար 1։

Վաճառականն մամոնայ լին.
Երբ է խոհեմ ըստ վաճա ուին.
զաւազն փոխէ ընդ մարգար տին.
ըղ շարժելին ընդ անշար ժին։